

Օ Ր Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ Է Գ

ՐԵՆԷ ԲԱՂԵՑԻ

III

Առաջին ընտանեկան ժողովը

Լիւսիէնի աչքերն աւելի արագ արագ թարթել սկսեցին և թրջուեցին: Նա միևնոյն ժամանակ ծիծաղում էր և իր կարմիր շրթունքները դողում էին ընքոյշ խօսքերից:

— Ճմարիտ, աւելի լաւ, ասաց նա: Ես չգիտեմ, ժան, թէ սա քեզ շահաւէտ է, բայց մեզ համար, աւելի լաւ:

Կռացած դէպի եղբայրը, անկեղծ ուրախութեամբ բռնուած, նա իրօք գեղեցիկ էր այդ վայրկենին:

— Շնորհակալ եմ, ասաց տիկին Օրերլէն, նայելով ամուսնուն լրջութեամբ, իմանալու համար, թէ ի՞նչ պատճառներով է նա առաջնորդուել: Շնորհակալ եմ ժողէֆ, ես չէի համարձակուի այդ խնդրել քեզանից:

— Բայց դուք տեսնում էք, սիրելիս, պատասխանեց ամուսինը գլուխ տալով՝ որ երբ ծրագիրը խելացի է, ես ընդունում եմ: Ասենք ես այնպէս քիչ եմ սովոր շնորհակալութիւն լսելու, որ այս մի անգամն էլ ինձ հաճոյք է պատճառում... Այո, մենք մի վճռական խօսակցութիւն ունեցանք: Վաղուանից ժանը իմ գործակատարի հետ կ'երթայ տեսնելու մեր գործարանի համար կտրուող ծառերը: Դուք գիտէք, որ ես երբէք ժամանակ չեմ կորցնում:

Տիկին Օրերլէն տեսաւ, թէ ինչպէս ծերունին մեկնեց դէպի ինքը քարետախտակը. նա առաւ և կարդաց հետեւեալ բաները.

— Սա իմ կեանքի վերջին ուրախութիւնն է:

Ոչնչով չէր կարելի նրա զգացած երջանկութիւնը նկատել այդ դիմակի պէս անշարժ դէմքի վրայ, բացի այն շեշտակի հայեացքից, որով Ֆիլիպ Օրերլէն դիտում էր իր որդուն, որ տուել էր Ալզասին մի զաւակ, իսկ տան արդիւնադործութեանը մի յաջորդ: Նա և՛ զարմացած էր և՛ ուրախ: Բոլոր սեղանակիցները նրա պէս էին և մոռացել էին ուտել: Ծառան նոյնպէս մոռացել էր մատուցանել և մտածում էր այն մասին, թէ որքան հետաքրքիր կը լինի խոհանոցում և քաղաքում յայտնել թէ «Պարոն Ժանը վճուել է ձեռք առնել տախտակի գործարանը, նա էլ չի հեռանայ այստեղից»: Մի քանի վայրկեան թխկենու տախտակով պատած սեղանատանը ամեն օր խմբուող չորս անձերից իւրաքանչիւրը ունէր իր առանձին խոհերը, իր զաղտնի մտքերը. իւրաքանչիւրը մտածում էր այն հաւանական և կարելի հետևանքների մասին, որ կարող էր ունենալ այս նոր դէպքը իր վերաբերմամբ, իւրաքանչիւրը յուզւում էր մտածելով, որ վաղը ինքը կը լինի ուրիշ կացութեան մէջ, քան կարող էր նախատեսել: Մի քան կար, որ փչում էր, ինչ որ սովորութիւններ, ծրագիր, տարիներից ի վեր ընդունած, կամ վզերին դրած մի ընթիմ, որ անցնում էր: Դա մի խառնակութիւն, կամ մի փախուստ էր նորութեան ուրախութեանը խառնուած:

Ամենից ջահիլը առաջինը ազդուեց այդ մտախոհ կացութիւնից. և Լիւսիէնն ասաց.

—Միթէ մենք այլևս չպէտք է նախաճաշենք, երբ Ժանը մեզ սեղանակից է: Սիրելիս, այս վայրկեանին մենք նոյն կացութեան մէջ ենք, ինչպէս էինք իր դալուց առաջ, երբ մենք ներկայացնում էինք համր էակներ, որոնցից իւրաքանչիւրը մտածում է իր համար: Ոչ թէ ամեն օր, այլ երբեմն, երբեմն... Համախմբումների պատճառած հաճութիւն էլ ռւր մնաց... Չվերբուկենք նոյնը, այնպէս չէ:

Եւ նա սկսեց այնպէս ծիծաղել, ասես այնուհետև անհամաձայնութիւնները վերջացած լինէին. նա մի քանի յաջող սրախօսութիւններ ասաց լուսկեաց սեղանակիցների մասին, Ալլէյմի երեկոյթների մասին, որոնք վերջանում են երեկոյեան ժամը 5ին, հաղուադէպ այցելութիւնների մասին, և Ստրազբուրգից ստացած մի կարևոր հրաւերի մասին: Եւ ամենքը լուսկեամբ նրան քաջալերում էին անիծել այդ անցեալը, որ խորտակւում էր այս կատարելապէս երջանիկ և կամքի տէր երիտասարդի վճռով, որ բնութեւն էր քրոջը սքանչացումով և զարմանքով:

—Այժմ ամեն ինչ կը փոխուի վերջացրեց Լիւսիէնը. մին-

չև հոկտեմբեր մենք չորսի փոխարէն հինգ կը լինինք սեղանին, Ալլէյմի յարկի տակ: Յետոյ դու կ'երթաս քո կամաւոր զինուորական ծառայութիւնը կատարելու, բայց դա տեւում է միայն մի տարի, և դու արձակուրդներ էլ կ'ունենաս:

— Ամեն կիրակի:

— Դու կը գաս տանը գիշերելու, տղաս, հարցրեց տիկին Օրբըլէն:

— Կարծեմ այո՛, շաբաթ երեկոները:

— Եւ մի սիրուն համազգեստ, գիտե՞ս, շարունակեց Լիւսիէնը, Ատիլլայի կապոյտ վերնազգեստ դեղին բծերով, սև կօշիկներ, և այն տէգը... Ես սիրում եմ մանաւանդ հանդիսաւոր օրերի փոկի կաշուց գլխարկը սև ու սպիտակ ցցունքով և սպիտակ ոսկեթել բանուածքները... Դա մեր բանակի ամենասիրուն համազգեստներից մէկն է:

— Այո՛, գերմանական բանակի, շտապեց աւելացնել տիկին Օրբըլէն, ցանկանալով ուղղել իր աղջկայ արտասանած այդ դժբաղդ խօսքը, որովհետև պապը ձեռքով մի շարժում արեց, որով կարծես մի բան էր ջնջում սփուռցի վրայից:

Պ. Ժողէֆ Օրբըլէ ժպտալով աւելացրեց.

— Եւ ամենաթանգերից մէկը: Ժան, քեզ մի սիրուն ընծայ եմ անում թոյլ տալով որ ընտրես հռենոսեան հուշարների վաշտի 9-րդ համարը. այդ ինձ վրայ ութ հազար մարկից պակաս չի նստի:

— Իսկապէ՞ս. այդքան թանգ է:

— Վստահ եմ: Դեռ ևս երէկ, Փոն Բոշէր խորհրդակցնի մօտ, երկու սպայի ներկայութեան առաջ էի բերում այն թուանշանները, որ ես ճիշտ էի կարծում. ոչ ոք ինձ չհակառակուեց: Պաշտօնապէս, հետևակ զօրքի շարքերում մի տարուայ կամաւորը, պէտք է ծախսէ երկու հազար երկու հարիւր մարկ, բայց իսկապէս նա ծախսում է չորս հազար. պաշարատար զօրքի շարքերում նա պէտք է ծախսէ երկու հազար եօթը հարիւր, իսկ ծախսում է հինգ հազար. հեծելազօրքի համար դանաղանութիւնը աւելի մեծ է, և երբ ձեզ հաւատացնում են, թէ կարող էք երեք հազար վեց հարիւր մարկով ազատուել, պարզապէս ծաղրում են, պէտք է հաշուել եօթից մինչև ութ հազար մարկ: Ահա ինչ որ ես ասացի, և ինչ որ պնդում եմ...

— Որովհետև զօրագունդը հիանալիօրէն կազմուած է, ընդհատեց Լիւսիէնը:

— Նրա մէջ հարուստի զաւակներ շատ կան արդարեւ...

— Նոյնպէս և շատ ազնուականներ, հռենոսեան ափերի

հարուստ, խոշոր գործարանատեղերի՝ զաւակների հետ խառն։ Այստեղ Լիւսիէնը և հայրը իսկոյն իրար հասկանալով՝ մի ժպիտ փոխանակեցին։ Միայն ժանը կարողացաւ նկատել այդ։ Դեռահաս աղջիկը հազիւ թեթեակի ժպտացել էր։ Նա շարունակեց.

— Կամաւորների տեղերը այնքան հազուադիւս են, որ մի տեղ ձեռք ձգելու համար պէտք է շուտ սկսել։

— Նրեք ամիս է արդէն, որ խօսել եմ քո գնդապետի հետ, ասաց պ. Օրերլէն։ Քեզ կը յանձնարարէ քո պետերից շատերին։ Լիւսիէնը անխորհրդարար բերնից փախցրեց.

— Դու, իհարկէ, նրանցից մի քանիսին կը բերես մեզ մօտ։ Դա շատ դուարձալի կը լինէր։

Ժանը չպատասխանեց։ Տիկին Օրերլէն կարմրեց, ինչպէս յաճախ, երբ իր ներկայութեանը մի աւելորդ, անտեղի խօսք էր արտասանուում։ Լիւսիէնը դեռ ծիծաղում էր, երբ մեծ հայրը դադարեց ուտելուց և զժուարուութեամբ, ցաւագին ցնցումներով, իր սպիտակ ու տխուր գլուխը դարձրեց դէպի թոռնուհին։ Մերուհի ալզասցու աչքերը պէտք է որ շատ դիւրահասկանալի լեզուով խօսէին, քանի որ դեռահաս աղջիկը անմիջապէս դադարեց ժպտալուց, մի թեթեւ անհամբերութեան շարժում գործեց, որով կարծես ուղում էր ասել. «Ճիշտն ասած՝ ուշադրութիւն չդարձրի որ դուք այստեղ էիք,» և ծուռեց դէպի հօր կողմը, նրան Աղլքսէյմի գինի առաջարկելու, բայց իսկապէս փախուստ տալու համար այն կշտամբանքներից, որ զգում էր իր վրայ ծանրացած։ Ներկայ եղող միւս երեք հոգիները, պ. Ժօզէֆ Օրերլէն, Ժանը և մայրը խնդիրը չներկարացնելու համար սկսեցին խօսել կամաւոր զինուորականներից, Ստրազբուրգի Սէն-Նիկոլայի զօրանոցի մասին, բայց հապճեպով, կրկնապատկելով բառերը, շահագրգռութեան նշաններն ու անօգուտ շարժումները։ Նրանցից ոչ մէկը չէր համարձակուում բարձրացնել գլուխը դէպի պապը։

Պ. Ֆիլիպ Օրերլէն շարունակում էր մի շեշտակի, խղճի խայթի նման անողոր հայեացքով նայել իր թոռին՝ յանցաւոր՝ իր անմիտ ու ձախորդ խօսքի համար։ Նախաճաշի մնացեալ մասը շատ շուտ վերջացաւ, տիրող ճնշուած դրութեան պատճառով, որը էլ աւելի ծանրացաւ, երբ պ. Ֆիլիպ Օրերլէն չընդունեց իր հարսի խնդիրը՝ ներել Լիւսիէնին, և մերժեց շարունակել ճաշը։

Տասը ըողէյ յետոյ, Լիւսիէնը, իրանց պարկի ծառուղին ներից մէկում գնաց գտաւ եղբօրը, որ վառում էր իր սիգարը։ Քրոջ ոտքի քայլերի ձայնը առնելով, նա դարձաւ յետ։

Լիւսիէնը այլ ևս չէր ժպտում: Հակառակ փչող հողմին, որ նրա մազերը ցրիւ էր տալիս, նա գլխարկ չէր դրել, այլ սպիտակ բրդէ մի շալ էր գցել իր ուսերի վրայ, առանց աշխատելու հաճելի երևալ. յանկարծ բորբոքուած ու իշխողաբար վազեց դէպի եղբայրը և ասաց.

— Տեսա՞ր: Այս դրութիւնն այլևս անտանելի է:

Ժան՝ վառուած լուցկին քամուց պաշտպանելու համար ձեռքերը միացրած՝ սիգարը քաշեց չորս հինգ անգամ, յետոյ այրուած լուցկին նետելով.

— Անկասկած, փոքրիկս, բայց ի՞նչ արած, պէտք է համբերութիւն ունենալ...

Այստեղ փոքրիկ չկայ, անմիջապէս ընդհատեց Լիւսիէնը, այլ ընդհակառակը մի մեծ, խելահաս անձ, որ կարիք է զգում քեզ հետ յստակ կերպով բացատրուելու: Սիրելիս, մենք միմիանցից չափազանց հեռու ենք ապրել, պէտք է որ իրար ճանաչենք, որովհետեւ ես քեզ հազիւ եմ ճանաչում, իսկ դու ինձ չես ճանաչում: Անհոգ եղիր, ես քեզ կ'օգնեմ, ես եկել եմ դրա համար:

Ժան մի րոպէ հիացումով դիտեց այդ բուռն կերպով յուզուած գեղեցիկ արարածը, որ դիմում էր իրան արծակ համարձակ. յետոյ, առանց իր անդռնութիւնը կորցնելու, զգալով որ տղամարդու իր դերն ու պատիւը պահանջում էին իր հերթին չըռնկուել, այլ մնալ սառնասիրտ դատաւոր, սկսեց քայլել Լիւսիէնի կողքին՝ ահա ծառուղիով, որի մի կողմից բարձրանում էր ծառերի մի երկար շարք, իսկ միւս կողմից տարածւում էր մարգագետինը:

— Դու կարող ես ինձ հետ խօսել, Լիւսիէն, կարող ես վստահ լինել...

— Քո գաղտնապահութեան վրայ: Շնորհակալ եմ. այս առաւօտ կարիք չեմ զգում քո գաղտնապահութեան: Ես ուզում եմ պարզապէս քեզ բացատրել թէ ի՞նչ կերպ եմ մտածում մի որոշ հարցի մասին և իմ խորհելու այդ եղանակը քեզնից չեմ թաքցնում: Դարձեալ ասում եմ քեզ որ սա անտանելի է: Այստեղ ոչինչ չէ կարելի ասել Գերմանիայի և գերմանացիների մասին, առանց վատաբանելու: Հէնց որ գովեստի կամ պարզապէս արդար վերաբերմունքի մի բառ արտասանում է նրանց մասին, մայրիկը խածոտում է իր շրթունքները, իսկ պապը՝ հրապարակաւ, ծառաների ներկայութեան, ինչպէս քիչ առաջ, ինձ ամօթից կարմրացնում է: Միթէ ոճիր է մի տարուայ կամաւոր զինուորի ասել. «Սպաներ կը բերեմ Ալշէյմ»: Կարձղ ենք արգելել, որ քո զինուորական ծառայութիւնը կատա-

բեռ մի գերմանական քաղաքում, մի գերմանական բանակում, իբրև հրամանատար ունենալով այնպիսի սպաներ, որոնք գերմանացի լինելով՝ կարծում եմ չեն դադարում բարեկիրթ դասակարգի մարդիկ լինելուց։

Լիւսիէն քայլում էր շղաճգօրէն, և, աջ ձևքով պրկում էր մի ոսկէ շղթայ, որ կրում էր իր կապտորակ կորսածի վրայ ց։

— Եթէ դիտենայիր, իմ խեղճ ժան, թէ ի՞նչքան եմ տառապել մեր տան մէջ աղատութեան այդ պակասից, թէ ի՞նչքան եմ տառապել մեր ծնողքները գլխովին տարբեր գտնելով այն դաստիարակութիւնից որ մեզ տուել են նրանք։ Որովհետեւ, աստ, վերջապէս, ինչո՞ւ են նրանք մեզ այդ դաստիարակութիւնը տուել։

Երիտասարդը հեռացրեց իր շրթունքներից սիգառը։

— Մեր դաստիարակութիւնը, Լիւսիէն, միայն մեր հօր ցանկութեամբն է եղել։

— Նա է միայն խելօքը։

— Օ՛հ, ի՞նչպէս կարողանում ես այդպէս խօսել քո մօր մասին։

— Լաւ հասկացիր, շարունակեց առանց շփոթուելու. ես նրանցից չեմ, որոնք իրանց մտածումի կէսը թագցնում են և միւսը անճանաչելի են դարձնում զարդարելով։ Քո կարծածից շատ աւելի եմ սիրում մայրիկին, բայց ես նրա վերաբերմունքը դատաստանի եմ ենթարկում։ Նա տան գործերից լաւ է հասկանում, նրբամիտ է, քիչ ու շատ ճաշակ ունի գրականութեան, բայց նա ոչնչից ոչինչ չէ հասկանում ընդհանուր գաղափարներից։ Նա Ալէէյմից էն կողմ չի տեսնում։ Հայրս, ինքը՝ շատ աւելի լաւ հասկացաւ Ալգասում մեր դրութիւնը. նա մեծապէս առաջնորդուեց իր յարաբերութիւններով, որոնք շատ ընդարձակ են և ամեն տեսակի, իր առևտրական շահով և իր փառասիրական ձգտումներով...

Եւ որովհետեւ ժան հարցական մի նշան արեց.

— Փառասիրական ի՞նչ ձգտումներով։

Լիւսիէն շարունակեց.

— Բռնեցի բեզ. այո՛, որպէս փոքրիկ աղջիկ, ինչպէս ինձ անուանում էիր, յանդուգն և մինչև իսկ անյարգալից եմ երևում բեզ, այնպէս չէ։

— Մի քիչ։

— Բարեկամս, ես քեզանից առաջ եմ ասում այն՝ ինչ դու մտածում ես, ես չեմ ուզում, որ դու ժամավաճառ լինես քաղաքական հոգեբանութեան ուսումնասիրութիւններով։ Դու

Նոր ես եկել այստեղ, իսկ ես երկուք ու կէս տարի է ինչ թողել եմ գիշերօթիկ վարժարանը, և աշխատում եմ քեզ օգտակար դարձնել իմ փորձառութիւնը: Լաւ ուրեմն, լսիր, կասկած անգամ չէ կարող լինել որ մեր հայրը փառասէր է: Նա ունէր ինչ որ պէտք է մի բարձր դիրքի հասնելու համար. իր ստորագրանքների հանդէպ երկաթեայ կամք, հարստութիւն, ուրիշների հետ վարուելու շատ ճկունութիւն, մտքի մի այնպիսի փայլուն վիճակ, որով նա՝ այստեղ գտնուող գերմանացի բոլոր գործարանատէրներէից կամ պաշտօնեաներից բարձր է: Նախապէս ասում եմ քեզ թէ այժմ, երբ նա Շտատհայլտերի մօտ մեծ պատիւ է վայելում, շուտով կը տեսնես նրան պատգամաւորութեան թեկնածու...:

—Այդ անկարելի է, Լիւսիէն:

—Գուցէ, բայց նա անկասկած մի օր պատգամաւոր կը լինի: Ես չեմ պնդում որ անպատճառ իր թեկնածութիւնը կը դնէ Օբերնէի համար, այլ Ալգասի մի ուրիշ մասում. և կրնաւորութիւն, որովհետեւ կառավարութիւնը ջերմօրէն պիտի պաշտպանէ նրան, իսկ ինքը պէտք եղած դոկտորութիւնները չպիտի խնայէ... Այս դէպքը գուցէ քո հաշիւների մէջ չէր մտնում, երբ որոշեցիր վերադառնալ Ալշէյմ: Զգում եմ որ իմ խօսքերը քեզ յուզում են պատճառում: Բայց այս չէ բոլորը. դու դեռ ուրիշ բաներ էլ կը տեսնես: Ինչ որ սակայն անհրաժեշտ է որ գիտենաս, իմ սիրելի ժան,—նա շեշտեց «սիրելի» բառի վրայ—ընտանեկան տունը միաբան չէ: Մենք բաժանուած ենք անդամանելի կերպով:

Ժան և Լիւսիէն մի բոլոր լռեցին, որովհետեւ բոլորովին մօտեցել էին տան դարպասներին. յետոյ մարդագետնի հետ նրանք շուռ եկան, և մտան երկրորդ ծառուղու մէջ, որ տանում էր դէպի տուն:

—Անդամանելի կերպով: Հաւատացած ես:

—Երեւայ պէտք է լինել կասկածելու համար:

Հայրս չի փոխուի և նորից Ֆրանսիացի չի դառնայ, որովհետեւ հակառակ դէպքում հարկաւոր պիտի լինէր հրաժարուել ամեն ապագայից և վաճառականական շատ առաւելութիւններից. մայրիկը չի փոխուի, որովհետեւ կին է, կնոջ սիրտ է կըրում և գերմանուհի դառնալ՝ կը նշանակէր նրա համար հրաժարուել մի զգացումից, որը նա շատ ազնիւ է համարում. դու յաւակնութիւնը չունես դաւանափոխ անելու պապին: Ո՛ւրեմն:

Լիւսիէն դադարեց քայլելուց, և կանգնեց ուղիղ ժանի դէմ ու դէմը:

—Ուրեմն, սիրելիս, քանի որ դու չես կարող խաղաղութիւն հաստատել քաղցրութեամբ, հաստատիր բռնի: Մի կարծե՛ր որ դու կարող ես չեղոր մնալ: Եթէ կամենայիր անգամ չեղորութիւն պահել, ես հաւատացած եմ որ հանգամանքները թոյլ չպիտի տային: Միացիր ինձ և հօրս, նոյն իսկ եթէ ամեն բանում մեզ հետ համաձայն չես: Ես աշխատեցի քեզ հետ տեսնուել, որպէսզի պաղատեմ քեզ մեզ միանալու: Երբ մայրիկը այն համոզմունքը գոյացնէ թէ իր երկու զաւակները իրան իրաւացի չեն գտնում, այն ժամանակ նուազ եռանդով կը պաշտպանէ իր պատանեկութեան յիշատակները, նա խորհուրդ կը տայ պապին յետ կենալ այն տեսակ ցոյցերից, ինչպէս այս առաւօտուանն էր, և մեր ձաշերը փակ դաշտերում մղուած կռիւների բնաւորութիւնը չեն ստանայ: Մենք կ'իշխենք: Ահա ինչ կարող ենք յուսալ: Ուղիւս ես... Հայրիկը անցողակի կերպով այս առաւօտ ինձ ասաց, որ դու գերմանացիների համար համակրանք չես զգում, բայց նրանց դէմ թշնամութիւն էլ չունես, ճիշդ է:

—Այո, թշնամութիւն չունիմ:

—Նեղիր ներողամիտ և յարգանքով վերաբերուիր դէպի նրանց, այսինքն դէպի մեզ, որ յարաբերութեան մէջ ենք ներանց հետ: Դու ապրեցիր տասը տարի Գերմանիայում, կը շարունակես այստեղ վարուել նրանց հետ այնպէս, ինչպէս վարուում էիր այնտեղ. չես հեռանայ սրահից, երբ նրանցից մէկը գալիս է մեզ այցելութեան:

—Ի հարկէ: Բայց, իմացիր, Լիւսիէն, որ նոյնիսկ եթէ տարբեր ձևով վարուեմ քան մայրիկը,—որովհետեւ իմ դաստիարակութիւնը ինձ տանելի է դարձրել այն, ինչ նրա համար դարձելի է,—ես չեմ կարող պախարակել նրան: Իմ կարծիքով նա շատ յուզիչ պատճառներ ունի այդպէս վարուելու համար:

—Յուզի՞չ:

—Այո:

—Իմ կարծիքով ի՞նչ-որ ջամբիտ պատճառներ:

Ժանի կանաչ՝ իսկ Լիւսիէնի աւելի բաց գոյն աչքերը մի րոպէ իրար հարցաքննեցին: Երկու երիտասարդները՝ հաւասարապէս լուրջ, դէմքի զարմացական, մարտահրաւէր արտայայտութեամբ միմեանց չափչփում էին և մտածում. «Մի-թէ սա քիչ առաջուայ ժպտուն ու գորովալից աղջիկն է:—Մի-թէ ինձ դիմադրողը նա է, ինձ նման դաստիարակուած մի եղբայր, որ պէտք է ինձ տեղի տար, եթէ ի՞նչ ուրիշ բանի, գոնէ նրա համար, որ ես իրանից աւելի փոքր եմ և նա բաղդաւոր է

ինձ վերստին տեսնելով» Լիւսիէն դժգոհ էր։ Այս առաջին ընդհարումը պայքարի մէջ էր դնում հայրական բուռն ընաւորութիւնը՝ որ Լիւսիէն ժառանգել էր, այն անյողողդէկամքի հետ, որ մայրը փոխանցել էր որդուն։ Լուսթիւնը խզողը եղաւ Լիւսիէն։ Նա շուռ եկաւ նորից քայլելու համար, և գլուխը ցնցելով։

—Հասկանում եմ, ասաց. դու կարծում ես, որ մայրիկի մէջ պիտի կարողանաս գտնել քեզ համար մի խորհրդակից, մի բարեկամուհի, որի առաջ լայնօրէն բաց են անում սրտի դռները։ Նա արժանի է ամեն յարգանքի, սիրելիս։ Բայց այս կէտում էլ դու սխալում ես։ Նա այդ փորձել եմ։ Նա է, կամ ինքնիրան կարծում է, շատ դժբաղդ։ Ինչ որ դու նրան ասես, նա անմիջապէս իբրեւ փաստ պիտի ծառայեցնէ իր սեփական կռոււմ։ Նիթէ, օրինակի համար, դու կամենայիր ամուսնանալ մի գերմանուհու հետ...

—Ո՛չ... Ա՛, երբէք։

—Ննթադրութիւն եմ անում... մայրիկը իսկոյն կ'երթար հայրիկի մօտ և կ'ասէր. «Տեսէ՛ք այս խայտառակութիւնը. դուք է՛ք մեղաւորը, դո՛ւք»։ Նւ, եթէ դու կամենայիր մի ալզասուհու հետ ամուսնանալ, մեր մայրը այդ իբրեւ զէնք պիտի գործածէր և ասէր. «Նա ինձ հետ է, ձեզ դէմ, հասկան՞ում է՞ք, ձեզ, ձեզ դէմ»։ Ո՛չ, սիրելիս, Ալշէյմում քո իսկական խորհրդակիցը Լիւսիէնն է։

Բռնեց ժանի ձեռքից և շարունակելով քայլել, դէպի նրան ուղղեց իր դէմքը, որ շողում էր կեանքով և երիտասարդութեամբ։

—Հաւտս ինձ, անկեղծ լինենք իրար վերաբերմամբ։ Այն օրից սկսած, երբ ճամբորդում էիր հեռուներում, ինձ լաւ չես ճանաչում. ես քեզ զարմացնում եմ։ Դու պիտի տեսնես, որ ես շատ թերութիւններ ունեմ, մեծամիտ եմ, անհատապաշտ, քիչ ընդունակ զոհողութիւնների, երբեմն պճնասէր, բայց երբէք կեղծաւոր։ Նրբ սպասում էի քո գալստեան, կարծում էի որ պիտի տիրանամ մի տնական ուրախութեան—քո երիտասարդութիւնը ունենալ իմինի կողքին, հասկանալու համար նրան։ Նա քեզ կ'ասեմ ինչ որ ունեմ կեանքումս ծանրակշիռ, ինչ որ կը վճռեմ անել... ոչ ոք չունեմ այստեղ ինձ կատարելապէս խորհրդակից։ Դու չես կարող գիտենալ թէ՛ իրքեան տառապել եմ... ուզում եմ։

—Լաւ, ուզում եմ։

—Դու ինձ կը յայտնես քո մտածմունքները, երբ քեզ հետ խօսեմ։ Ինչպէս յաճախ, ես չեմ խեղդուի այլ ևս այս

տան մէջ... Ես քեզ ասելու շատ բաներ կ'ունենամ... Այսպէս մենք կը յաջողենք ձեռք ձգել այն մտերմութիւնը, որ մեզ պակասում էր, և թէպէտեւ մի քիչ ուշ՝ մեզ համար կըստեղծենք մի փոքրիկ եղբայրակցութիւն... Ի՞նչի մասին ես մտածում:

—Այս խեղճ տան մասին:

Լիւսիէն բարձրացրեց աչքերը դէպի իր առաջ ցցուող հերձաքարեայ տանիքը: Նա ուզում էր ասել. «Եթէ գիտնայիր, որքան տխուր է նա, իսկապէս» Յետոյ համբուրեց եղբորը, և բաժանուելով՝ ասաց.

—Ես քո կարծածի չափ վատ չեմ, եղբայրս, և ոչ էլ այնքան ապերախտ՝ դէպի մայրիկը: Ես կեքթամ նրա հետ խօսելու քո վերադարձի մասին: Անկասկած նա կարիք է զգում մէկի հետ խօսակցելու և քո վերադարձի պատճառած՝ երջանկութիւնը պատմելու...

Լիւսիէն բաժանուեց իր եղբորից, նորից յետ դարձաւ նրան ժպտալու համար, և, լքուած ու ճարտար աստուածուհու իր քայլուածքով հեռացաւ, մի ձեռքով տեղաւորելով դուրս ընկած զնդասեղները մազերի մէջ, որ պտոյտից և հողմից քանդուել էին, անցաւ յիսուն քայլի այն տարածութիւնը որ բաժանում էր նրան վերնադաւթակից և անհետացաւ:

VI

Հայրենի տան պահապանները

Երբ Լիւսիէն ժանից բաժանուեց, այս վերջինը տան առաջից անցաւ, անցկացաւ մի կիսաբոլորակ բակից՝ կազմուած դռներով և կառատներով, յետոյ որմերով շրջապատուած բանջարեղէնի մի մեծ պարտեզից և բանալով մի դուռ, բոլորովին ծայրում, աջակողմում, դուրս եկաւ Ալէքսի գիւղի ետեւը գտնուող դաշտում: Վերադարձի իր առաջի ուրախութիւնը արդէն նուազել, խամրել էր: Նա նորից լսում էր այն խօսքերը, որ թափանցել էին իր հոգու խորքում և որոնք վերակենդանանում էին իրանց շեշտով, և պատկերովը, շարժումովը նրան, որ արտասանել էր: Նա մտածում էր այն «տխուր տան» մասին, որը գտնուում էր իր առաջ, այն որմնապատնէշի մօտ, որ սահման էր դնում իրանց կառուածքին, և տառապում էր յիշելով թէ տարիներից ի վեր ո՞րքան տարբեր դադափար էր կազմել այն ընդունելութեան մասին, որ իրան սպասում էր Ալէքսիում, այն համարեա կրօնա-

Յուլիս, 1908.

կան յուզման մասին, որ նա զգում էր հեռում, Եւրոպայի կամ Արեւելքի քաղաքներում կամ ճանապարհների վրայ, երբ մտածում էր. «Մայրս, հայրս, քոյրս, մեր տան մէջ անցկացնելիք առաջին օրս, երբ հայրս ասէ այն»։ Առաջին օրը սկսուել էր։ Մինչև այժմ նա բնաւ արժանի չէր եղել իր երեքմիսի երազին։

Եղանակն անգամ վատ էր։ Ժան Օբերլէի առաջ Ալգասի հովիտը ձգւում էր լեռի, ծառերի մի քանի ցանցառ շարքերով հազիւ գծաւորուած, անտառապատ և հետզհետէ խոնարհող Վոսթերի փէշերում։ Հիւսիսի քամին ծովից փչելով ամբողջ հովիտը լեցնում էր իր երկար հեծեծանքով, վռնդում էր երկնքում մուլթ, ջախջախուած, և հերկուած արտի աղօսների նման կուտակուած ամպեր, անձրևով և կարկուտով բեռնաւորուած ամպեր, որոնք հետզհետէ վիթխարի զանգուածներ կազմում էին և պիտի փլչէին հարաւում Ալպերի կշտին։ Օդը ցուրտ էր։

Բայց Ժան Օբերլէն դիտելով ձախ, դէպի այն կողմը, ուր երկիրը փոքրիկ զառիվայր էր կազմում, նշմարեց պուրակների փունջով վերջաւորուած ծառուղին, որը տեսել էր առաւօտեան և նորից զգաց որ իր երիտասարդութիւնը ձգւում էր դէպի նա։ Վստահ լինելուց յետոյ, որ իրանց տան պատուհաններից հչ ոք չէր լրտեսում, մտաւ այն նրբուղու մէջ, որը գիւղի շրջանն էր անում։

Ճիշտն ասած դա մի արահետ էր գծուած աշխատանքի գնացող և աշխատանքից վերադարձող մարդկանց համար։ Նա տանում էր համարեա այն ժանեկաւոր գծով, որ կազմում էին սայլատները, խոզաբուները, գոմերը, ամբարանոցները, աղբակոյտերով լեցուած ցածր տնակները, հաւաքոյները, մի խօսքով ամբողջ յետնամասը Ալշէյմի բնակարանների, որոնց գլխաւոր ֆասսադը գտնւում էր ճանապարհի վրայ, միւս կողմում։ Ժան արագ-արագ քայլում էր։ Նա անցկացաւ եկեղեցու առջեւից, որ Ալշէյմի համարեա կենդրոնում ցցում էր իր քառակուսի աշտարակը, որի վրայ բարձրանում էին հերձաքարեայ, զանգակաձև մի տանիք և մի սրածայր մետաղ, և հասաւ չորս հսկայ կաղնիներից բաղկացած մի ծառախմբի կենդրոնում, որոնք ծառայում էին իբրեւ ցուցանիշ, իբրեւ զարդ և իբրեւ ապաստան գիւղի վերջին ագարակի։ Այդտեղից էր սկսում Ալշէյմի գիւղապետի, պ. Քսավիէ Բաստիանի կալուածը, Բաստիան՝ վաղեմի բարեկամը պ. Ժոզէֆ Օբերլէի, այն ազդեցիկ, հարուստ հայրենասէր անձը, որի մօտ գնում էր Ժան։ Հարեան բակից բարձրանում էր կամսակի, ցորեն ծեծելու գործիքի ձայնը։ Դրանք՝ Ռամշալսէրների՝ Բաստիանների ագարակապանների

բարձրահասակ գեղեցիկ որդիները պէտք է որ լինէին, որոնցից մէկը կատարել էր արդէն իր զինուորական ծառայութիւնը գերմանական բանակում, միւսը պիտի կատարէր առաջիկայ նոյեմբեր ամսին: Նրանք ցորենը ծեծում էին կամնոցի տակ, հին ձեռով: Ամբողջ աշունը, ամբողջ ձմեռը, երբ ցորենի պաշարը պակասում էր ջրադացպանի մօտ և եղանակը վատ էր լինում, նրանք փուում էին մի քանի որաներ կամնոցում և կամսակներով ծեծում էին համ ծեծում, և վազվզում քուռակների նման, որոնց արձակում են սիգաւէտ դաշտում: Ոչինչ չէր խանգարել աւանդութիւնը:

—Պօք չկայ որ իմ Ալլէյմը հիւն է, մըմնջեց Ժանը

Թէպէտև շատ ցանկանում էր չճանաչուել, բայց այնուամենայնիւ նա մօտեցաւ վանդակապատ դռան, որ բացւում էր այս կողմից, դաշտի վրայ, և եթէ չկարողացաւ տեսնել աշխատաւորներին, որոնք գործում էին մի սայլակի ետևում, տեսաւ, բարեկամական ժպիտով՝ հինաւուրց ագարակի բակը, մի տեսակ փողոց, որը եզերում էին ատաղձեայ անշուք շինութիւններ, որոնք ապացոյց էին շագանակենու երկարակեցութեան. այդ շագանակներին է որ մատակարարել էր դռների գերանները, փայտեայ պատշգամբները և պատուհանների շրջանակները: Ոչ ոք նրա քայլերի աղմուկը չլսեց, ոչ ոք չնկատեց որ նա այնտեղ է: Նա շարունակեց ճամբան, և սիրտն սկսեց ուժգնօրէն բարախել: Որովհետև Ռամշախէրների ագարակից անմիջապէս յետոյ, արահետը ուղիղ անկիւնով իջնում էր կեռասիների ծառուղու վրայ, որ գիւղից տանում էր պ. Բաստիանի բնակարանը: Հաւանական չէր, որ այդ մօայլ եղանակին՝ գիւղապետը իր տանից բացակայ լինէր: Մի քանի րոպէից Ժան նրան պիտի խօսէր, պիտի տեսնէր Օդիլին, մի որևէ միջոց պիտի գտնէր իմանալու համար թէ նշանձաւ էր:

Օդիլ. Ժանի ամբողջ երեխայութիւնը լեցուած էր այդ անունով: Պ. Բաստիանի աղջիկը Լիւսիէնի և Ժանի խաղի ընկերն էր եղել ժամանակով, երբ պ. Օրերլէի փոփոխութիւնը դեռ ևս չէր հաստատուած և յայտնուած երկրում. նա քիչ յետոյ դարձել էր այն հիւսնալի տեսիլքը՝ որ Ժան պատկերացնում էր իր առաջ Միւնխէնի գիմնադրայում, երբ մտածում էր Ալլէյմի մասին, այն մեծացող դեռահաս աղջիկը, որին տեսնում էին արձակուրդների ժամանակ, կիրակի օրերը, եկեղեցում, որին բարևում էին հեռուից, երբ պ. կամ տիկին Օրերլէ այնտեղ էր լինում, ինչպէս և այգեկութքի ժամանակ այգիներից և անտառներից անցկացող աղջիկը, Թափառուհին, որ ճանապարհի մի դարձուածքում պատահելով Լիւսիէնի կամ

Ժանի, առաջինին ուղղում էր մի ժպիտ, երկրորդին մի խօսք։
Կախարդանքի թնչպիսի գաղտնիք կրում էր իր մէջ Ալշէյմի այդ աղջիկը՝ մեծացած համարեա ամբողջապէս դաշտում, բացի երկու կամ երեք տարիից, որ նա անց էր կացրել Ստրազբուրգի Նոտր-Դամի մայրապետների մօտ։ Օգիլ ընաւ աշխարհիկ կնոջ դրօշմ չէր կրում. նուազ շացուցիչ քան Լիւսիէնը, աւելի լռակեաց և աւելի լուրջ էր։ Անկասկած յար և նման այն երկրին. ուր ծնուել էր։ Ժան նրան թողել հեռացել էր, ինչպէս հեռացել էր Ալզասից, առանց կարողանալ նրան մոռանալու։ Նա աշխատել էր չտեսնել նրան, վերջին անգամ, երբ եկել էր մի քանի օր անցկացնելու Ալշէյմում, որպէսզի փորձէ և իմանայ թէ արդեօք, Օգիլի յիշատակը պիտի կարողանա՞ր դիմադրել երկարատեւ բաժանման, և ուսումնասիրութիւնների և ճամբորդութիւնների։ Մտածել էր. «եթէ այդ ժամանակամիջոցում նա ամուսնանայ, դա ապացոյց է որ նա երբէք չէ խորհել իմ մասին և ես նրա կորուստը չեմ ողբայ»։ Նա չէր ամուսնացել։ Ոչինչ չէր ցոյց տալիս որ նա նշանուած է։ Եւ ապահովաբար Ժան նրան վերստին պիտի տեսնէր։

Գերադաս համարեց չմտնել վայրի կեռասենիների ծառուղու մէջ, որոնք հռչակաւոր էին իրանց գեղեցկութեամբ և պահպանում էին Բաստիանների կալուածքը։ Այդ բոպէին, որքան որ էլ սակաւաթիւ լինէին գիւղի մարդիկը, հարեան դաշտի մէջ ցրուած աշխատաւորները, պիտի կարողանային ճանաչել դործարանատիրոջ որդուն, որ գնում էր Ալշէյմի գիւղապետի մօտ։ Գնաց խուզուած, սև փշեայ ցանկապատի ուղղութեամբ, որ սահմանափակում էր ծառուղին, քայլելով կարմիր հողի միջից կամ փոսի եզերքին արօրի թողած խոտի նեղ շերտի վրայով։ Նրա ետևից բարձրանում էր ցորեն ծածոզների հանած աղմուկը՝ հեռաւորութեան համեմատ հետզհետէ նուաղուն և քամուց ամեն կողմ սփռուած։ Ժան ինքն իրան հարց էր տալիս։

«Թնչպէս պիտի մօտենամ պ. Բաստիանի։ Ի՞նչ ընդունեթիւն պիտի անէ ինձ։ Է՛հ, ես նոր եմ եկել, ես ինձ ցոյց կը տամ, որպէս թէ ոչ մի բանից տեղեկութիւն չունեմ»։

Ազարակի հարաւակողմում, երկու հարիւր մետր ասարածութեան վրայ, վայրի կեռասենիների ծառուղին վերջանում էր, և հեռուից նշմարուող պուրակը շրջանաձև բլուրում էր սերմանուած դաշտերում։ Անտառը կազմում էին գեղեցիկ ծառեր, կաղնիներ, սօսիներ, թեղիներ՝ այդ բոպէին տերեւաթափ՝ և որոնց տակ աճում էին դալար ծառեր, շոճիներ, ելենիներ, սարդիներ։ Ժան շարունակեց քայլել ցանկապատի երկարու-

Թեամբ, որը թեքուում էր ասպարնների միջով դէպի մի գեղջկական դուռ՝ գունաթափ և կիսով չափ փտած՝ որ բարձրահում էր երկու գերանների միջև։ Մի խճաքաբա՝ փոսի վրայ նետուած՝ ծառայում էր իբրև կամուրջ։ Սարդիները՝ զառիվեր ցանկապատի երկու կողմից ներս էին թափուում և տեսարանը ծածկում էին երկու մետր հեռաւորութեան վրայ։ Երբ ժան մօտեցաւ, մի սարեակ ճշալով փախաւ։ Ժան յիշեց որ մտնելու համար բաւական էր միայն ձեռքն անցկացնել ցանկապատից ներս և վերցնել փականքի կեռ երկաթը։ Բացաւ ուրեմն դուռը, և իր յանդգնութեան պատճառով փոքր ինչ անհանգստացած, չափազանց նեղլիկ ու շատ քիչ անգամ գործածուած մի ծառուղու անգուստ ճիւղերից ոտից մինչև գլուխ փոշոտած՝ դուրս եկաւ մի աւաղածածկ, բաց վայրում, և բազմաթիւ մացառապատ թըփիկների շուրջը պոռոյտ գործելուց յետոյ հասաւ տան մօտ, Ալշէյմի հակառակ կողմում։ Այդտեղ կային հարիւր տարեկանից աւելի ծեր, կիսաշրջանակաձև տնկուած շոճիներ, որոնց հովանու տակ աճում էր մի փոքրիկ մարգագետին, և որոնք իրանց ճիւղերը տարածում էին ցածրիկ որմերով, հասարիկ երկու պատըշգամբներով սապատաւորուած և քիււաւոր տանիքներով մի հին տան կղմինդրների վրայ։ Ամբարանոցներ, հնձաններ, կամնոցներ, մի մեղուանոց ստուարացնում էին տիրոջ բնակարանը, ուր երեան էր գալիս հին բուրժուական Ալզասի առատութիւնը, միամտութիւնն ու պարզութիւնը։

Ժան՝ իրան երբեմն ընտանի այդ տեղերի անդիմադրելի հրապոյրից ձգուած՝ մի բոպէ կանգ առաւ և դիտեց շոճիները, տանիքը, մի պատուհան, որի պատշգամբում աճում էին բաղեղները։ Նա պատրաստուում էր անել այն մի քանի քայլը, որ բաժանում էր նրան կիսաբաց դռնից, երբ շէմքի վրայ երեաց մի բարձրահասակ մարդ, և ճանաչելով այցելուին, զարմացման մի շարժում գործեց։ Քսավիէ Բաստիանն էր։ Ամբողջ էրշաէյնում վաթսուհամեայ ի՛նչ մի անձ այնքան կայտառ և քաջաւորջ էր որքան նա։ Ունէր լայն ուսեր, յաղթ գլուխ, նոյնքան լայն, վարից որքան վերից, ձիւնի նման սպիտակ մազեր, բաժանուած՝ կարճ փնջերի, որոնք արշաւում էին միմիանց վրայ, այտերն ու շրթների վերէն ածելած, խոշոր քիթ, արտայայտիչ ու մոխրագոյն աչքեր, փոքր բերան, և դէմքի վրայ այն մի տեսակ գրաւիչ հպարտութիւնը նրանց, որոնք ոչ մի բանից երկիւղ չեն կրել երբէք։ Հագել էր այն երկար ռընդենգոզը, սիււրտիւկը, որին հաւատարիմ են մնացել ալզասցի մի քանի յայտնի անձեր նոյնիսկ գիւղերում, ինչպէս Ալշէյմում,

ուր բնակիչները հագուստի ոչ մի առանձնայատուկ ձև չունեն, ոչ էլ յիշողութիւն՝ թէ ունեցել են:

Նշմարելով ժան Օբերլէին, որին խաղացրել էր իր ծնկների վրայ, երբ նա դեռ փոքր էր, զարմանքի մի շարժում արեց: — Դձև ես, իմ փոքրիկ, ասաց ալգասական այն բարբառով, որը նա գործ էր անում շատ աւելի յաճախ և շատ աւելի ընտանեբար քան ֆրանսերէնը. ի՞նչ դէպք պատահեց որ դու եկար:

— Ո՛չ մի, պարոն Բաստիան, եկայ հէնց այնպէս: Ժան ձեռքն երկարեց ծերունի ալգասցուն: Այս վերջինը բռնեց նրա ձեռքը, սղմեց և յանկարծ կորցրեց այն զուարթութիւնը, որով ընդունել էր ժանին, որովհետև մտածում էր.

«Ահա տասը տարի է որ հայրդ ոտք չէ կոխել այստեղ, տասը տարի՝ որ քո ընտանիքն ու իմը իրար թշնամի են:» Նա ինքն իրան պատասխանելով և կարծես մի հարց լուծելով՝ ասաց միայն.

— Յամենայն դէպս մտի՛ր, ժան, մի անգամուայ համար ֆրաս չունի...:

Բայց առաջին հանդիպման բաւականութիւնն անհետացել էր, և էլ չերևաց:

— Ի՞նչպէս նկատեցիք որ ձեր կալուածքն էի մտել, հարցրեց ժան առանց ոչինչ հասկանալու: Հսկում էիք իմ ոտնաձայնը:

— Ո՛չ, սարեակի ճչալը լսեցի: Կարծեցի որ իմ ծառան էր, որին ուղարկել էի Օբերնէ կառքիս լապտերները նորոգել տալու համար: Մտի՛ր սրահ, փոքրիկս... Նա՛ պարսաւախառն ցաւի մի զգացումով մտածում էր. «Ինչպէս քո հայրը մտնում էր, երբ արժանի էր:»

Նրբանցքի մէջ, ձախակողմում, բաց արեց մի դուռ և երկուսը միասին մտան «սրահ», որը և իբրև ճոշասրահ և իբրև ընդունելութեան դահլիճ էր ծառայում այս հարուստ բուրժուայի համար, ժառանգորդ հողերին և աւանդութեանը մի շարք նախահայրերի, որոնք Ալքէյմի տնից հեռացել էին, Ալքէյմի գերեզմաննոցում հանգչելու համար միայն: Այն համարեա ամբողջ նկարագրող կահաւորումը, որին հանդիպում ենք դեռ ևս այսօր գեղջկական Ալգասի վաղեմի տներում, անհետացել էր պ. Բաստիանի բնակարանից: Ո՛չ մի քանդակագործ պահարան, ոչ մի աթոռ լեցուն փայտից, որի յենարանը փորուած է սրտի ձևով, ոչ մի պատի ժամացոյց նկարուն պատեանով, ոչ մի կապարեայ փոքրիկ գունտ պատուհաններում: Աթոռները՝ սակաւաթիւ՝ ընդարձակ, քառակուսի, լուսաւէտ սրահում, սե-

դանը, դարանը, պահարանը, որի գազաթին հանգչում էր մի անյայտ Պիէտայի *) Թափծու արձանը՝ վեռնիճուած ընկուզե-
նուց էին: Երբև հնուծիւն կար միայն պատմական նկարներ
կրող ֆայանսէ մի վառարան, որ Ստրաղլուզգի Հուզէն վար-
պետի ստորագրութիւնն էր կրում, և որով պարծենում էր պ.
Բաստիան իբրև մի գանձով: Վառարանի և սեղանի մէջտեղ,
ընակարանի երկու երրորդ մասում նստել էր մի յիսնամեայ,
սևազգեստ կին, փոքր ինչ յաղթանդամ, կանոնաւոր և կարծ-
րացած դիմագծերով, մոխրագոյն մազի գիսակներով, կանոնա-
ւոր և համարեա անկնճիւռ ճակատով, գեղեցիկ, երկար յօնքե-
րով և մութ աչքերով—որպէս թէ Հարաւի բնակիչ լինէր—և
խաղաղ, և աղնիւ, որոնց բարձրացրեց նախ ժանի և ապա ան-
միջապէս իր ամուսնու վրայ, կարծես հարցնելու համար. «Ի՞նչ
ասելով գալիս է մեզ մօտ»:

Նա խժպում էր անլուայ կտաւէ մի վերմակի եղբրքները,
որը թափւում էր նրա շուրջը բեկբեկ ալիքներով: Ժանի ներս
մտնելը տեսնելով ձեռքի կտաւը վար էր գցել: Ջարմանքից
համրացած՝ անկարող լինելով ըմբռնել, որ ամուսինը իր մօտ
բերէ ալզասցի ուրացող մի հօր Գերմանիայում ուսած որդուն:
Ժամանակով՝ նրա երեք եղբայրները մեռել էին Ֆրանսիայի
համար պատերազում:

—Ինձ այցելութեան էր գալիս՝ ճանապարհին պատահեցի
և խնդրեցի որ մտնէ, Մառի, ասաց պ. Բաստիան ինքն իրան
արդարացնելու նպատակով...

—Բարե, տիկին, ասաց երիտասարդը՝ տիկին Բաստեանի
ղարմանքից և առաջին հայեացքի սաւնութիւնից վիրաւորուած՝
և սրահի մէջտեղ կանգուն մնացած... Հին յիշողութիւններն
ինձ այստեղ բերին...

—Բարե, ժան:

Բառերը՝ հինաւորց փենունաներով ծածկուած պատերին
չհասած՝ մեռան: Հազիւ լսուեցին: Նրանց յաջորդող լուծիւնը
ախքան անգութ էր, որ ժան գունաթափուեց. և պ. Բաստիան,
որ դուռը փակելուց յետոյ կանգնել էր մի քայլ ժանից հեռու,
գլխի մի ցնցումով մեղմիւ կշտամբեց ալզասուհու գեղեցիկ,
խստահայեաց աչքերը՝ որոնք չէին խոնարհում և միջմտելով
ասաց.

—Մառի, ես քեզ չպատմեցի, որ այս առաւօտ մեր բա-

*) Պիէտա անունն է կրում այն նկար կամ արձանախումբը, որ ներ-
կայացնում է մեռած Քրիստոսը, որի ոտքերի տակ ոգում են սուրբ կա-
նայը:

բեկամ Ուլրիխին պատահեցի Սէնտ-Օդիլի մեր այգիներում: Նա խօսեց այս երիտասարդի Ալէյմ վերադարձի մասին... Ինձ ապահովացրեց, որ իր քրոջ որդու մեր երկրում հաստատուելուց դժգոհ չպիտի լինէինք բնաւ: Նա ինձ ներկայացրեց սրան իբրեւ մերոնցից մէկը...

Ալգասուհու լուռ շրթների վրայ թերահաւատութեան մի թեթեւ ժպիտ գծադրուեց, որը խկոյն անհետացաւ, ինչպէս բառերը: Եւ տիկին Բաստիան նորից ձեռք առաւ կարը:

Ժան շուռ եկաւ, և, դժգոյն, աւելի դժբաղդ քան զայրացած՝ կիսաձայն ասաց պ. Բաստիանին.

— Ես գիտէի որ մեր երկու ընտանիքները անհամաձայն են, բայց ոչ այս աստիճան... Ես Ալէյմից հեռացել եմ վաղուց... Ներեցէք, որ եկայ ձեզ...

— Կաց, փոքրիկս, կաց... Ես քեզ կը բացատրեմ... Դու կարող ես հաւատացած լինել, որ մենք ոչինչ չունենք քեզ դէմ, ոչ մի թշնամութիւն, ոչ ես, ոչ էլ նա:

Ծերունին բարեկամաբար ձեռքը դրեց Ժանի թևի վրայ,

— Ես չեմ ուզում որ դու այսպէս գնաս: Ո՛չ, քանի որ դու եկել ես, չեմ ուզում որ ասես, թէ քեզ առանց պատուի ճանապարհ գցեցի... Դրա յիշողութիւնը ինձ կը ճնշէր... Ձեռ ուզում:

— Ո՛չ, պարոն Բաստիան, ես այստեղ աւելորդ եմ, չեմ կարող մնալ, ոչ մի վայրկեան:

Ժան մի քանի քայլ առաւ մեկնելու համար: Ալէյմի ալիւր գիւղապետի զօրեղ ձեռքը սեղմուեց նրա դաստակի շուրջը: Ձայնը բարձրացաւ և խիստ շեշտ ընդունեց,

— Իսկոյն: Բայց մի մերժի դոնէ այն պատիւը, որ ես անում եմ բոլոր նրանց, որ մտնում են ինձ մօտ... Դա երկրի և տնային սովորութիւն է: Ինձ հետ մի բաժակ խմել մի մերժի, Ժան Օբերլէ, ապա թէ ոչ ես էլ, իմ հերթին, քեզ մոռացութեան, անճանաչութեան կը տամ և այնուհետև մենք միմեանց չենք բարևի անգամ:

Ժան յիշեց որ Բարբի կամ Օբերնէի գիւղական տներից ոչ մէկը, նոյնիսկ ամենավաղեմիներն ու հարուստները, պորոմիկի (alizer), կեռասի կամ թանթրուենիի օղու և ուրիշ խմիչքների պատրաստութեան մէջ այնքան հռչակուած չէր, որքան Բաստիանների ընտանիքը: Տեսաւ որ Ալէյմի ծերունի գիւղապետը պիտի վիրաւորուէր, եթէ մերժում ստանար, ուստի Ժան պատասխանեց.

— Լաւ:

Իսկոյն պ. Բաստիան կանչեց.

—Օգիլ:

Այն ձեռքերը որ բռնում էին կտաւը, ֆայանսէ վառարանի մօտ, հանգչեցին սև շրջագծեալի ծալքերի վրայ, և, կէս բոպէի ընթացքում, ներկայ եղող մարկային երեք հոգիները, միմեանցից բոլորովին տարբեր մտածութիւններով՝ սպասում էին նրան, որ պիտի երևէր նրանի խորքում, աշակողմում, ընկուղենիէ պահարանի մօտ, հեռուն: Նա երևեց. դուրս եկաւ կողքի մի սենեակի ստուերից և առաջացաւ դէպի լոյսը, մինչդեռ ժան կռում էր իր յուզմունքի դէմ, և խորհում էր. «Ո՛րքան լաւ արեցի, որ յիշեցի այս աղջկան:»

—Տնւր ինձ ամենահին օղին, որ ունենք մեր տանը, ասաց հայրը:

Օգիլ Բաստիան նախ ժպտացել էր իր հօրը, որին նըշմարում էր դռան մօտ, յետոյ իր թուխ յօնքերի մի շարժումով՝ առանց տհաճութեան, ցոյց էր տուել իր զարմանքը նրա կողքին ճանաչելով ժան Օքերլէին. ապա ժպտան անհետացել էր, երբ տեսել էր մօրը՝ կռացած՝ աշխատանքի սեղանի վրայ, լուռ և կարծես օտար՝ իր շուրջը խօսուածին և կատարուածին: Այն ժամանակ նրա կուրծքը ուռել էր, իր պատասխանելիք խօսքերը շրթներին հասնելուց առաջ կանգ էին առել, և Օգիլ Բաստիան՝ պէտք եղածից աւելի խելահաս՝ գուշակել էր նախատինքը, սրտով չափազանց կին՝ չէր ուզեցել բորբոքել այդ նախատինքի գաղտնի ցաւը և պարզօրէն ու լռութեամբ հնազանդուել էր: Նա գլորոցի դարակում փնտռել էր մի բանալի, մօտեցել էր պահարանին, և, ոտքի մատների վրայ բարձրանալով, մի ձեռքով յենած երկփեղկ պահարանի անկիւնին, ծոծրակը յետ դրած՝ որոնում էր կահի խորքերում: Նա միևնոյն դեռահաս աղջիկն էր, աւելի փթթած, որ տարիներից իվեր ապրում էր ժանի յիշատակով և մտքով հետևում էր նրան ամեն տեղ: Կարելի չէր ասել որ նա կանոնաւոր գեղեցկութեան տէր էր: Այնուամենայնիւ նա գեղեցիկ էր, մի հօր և լուսաւոր գեղեցկութեամբ: Նմանում էր Ալգասի արձաններին, որ տեսնում են ֆրանսիացիներից մնացած յիշատակարաններում և պատկերներում, հարուստ և ռազմական արիւնից սերուած այն աղջիկներին, որ զայրանում են, արհամարհում վտանգը, մինչդեռ նրանց մօտ, լաց է լինում փափկակաղմ Լոռէնի աղջիկը: Օգիլ այդ արձանի բարձր հասակը ունէր, լայն այտուկները, որոնց՝ մի մաքուր կոր գիծ՝ միացնում էր հաստատուն կզակին և որոնք հաւասարապէս վարդագոյն էին: Ճիշդ է նրան պակասում էին գլխի շուրջը երկու թևեր ձևացնող սև ժապաւէնի հանգրիճները, բայց մազերը՝ դրա համար՝ էլ աւելի ինքնատիպ և

աւելի հազուադէս էին երևում, հասած ցորենի գոյն մազեր, կատարելապէս միաձև և անփայլ երանգով՝ որոնց թեթևօրէն, գիսակներով թափում էր քունքերի վրայ և այնուհետև ոլորելով վեր էր առնում: Այդ նոյն անփայլ գոյնովն էին երկար և նուրբ յօնքերը, արտևանդները և մինչև անգամ աչքերը, մի քիչ իրարից հեռու, ուր ապրում էր խաղաղութեան մէջ մի խանդոտ և խոր հոգի:

Մի բուռն, պ. Բաստիանի առաջ, միոտանի սեղանի վրայ պատրաստ էին երկու քանդակազարդ բիւրեղեայ բաժակ և մի մեծափոր, սև շիշ: Մի ձեռքով բռնեց շիշը և միւսով՝ առանց ցնցելու՝ հանեց խցանը, որ ուռչում էր քանի հասնում էր շիշի բերանը: Միկնոյն ժամանակ, հասած պտուղների մի բուրմունք բռնում էր ամբողջ սրահը:

— Յիսուս տարուայ գինի է, ասաց, իւրաքանչիւր բաժակի մէջ մի մատ լեցնելով:

Լըջօրէն աւելացրեց.

— Պմում եմ քո կենաց, Ժան Օբերլէ, շնորհաւորելով քո վերադարձը Ալշէյմ:

Բայց Ժան առանց ուղղակի պատասխանելու, և բոլորի լուսթեան մէջ, դիտելով Օդիլին, որ յետ էր քաշուել և կռնակը տուած պահարանին դիտում էր նոյնպէս և ուսումնասիրում հայրենիք վերադարձած երեսայութեան իր ընկերոջ—ասաց. բարձրաձայն.

— Իսկ ես խմում եմ Ալզասի կենաց:

Սօսքերի շեշտից, ադամանդափայլ փոքրիկ բաժակը վերցնող ձեռքի շարժումից, դէպի սրահի խորքը սկեռող հայեացքից մէկը հասկացել էր, որ Ալզասը պոստեղ անձնաւորուած և ներկայ էր: Բաստիանների բարձրահասակ և գեղեցիկ աղջիկը անշարժ մնաց, կռթնած պահարանին, որ նրան ընկղմում էր իր խարտեաշ ստուերի մէջ: Բայց նրա աչքերը ցոլացին, ինչպէս քամու շնչի տակ, արևի մէջ վէտվէտող ցորենները: Ու առանց գլուխը դարձնելու, առանց դադարելու դիմացը նայել, նրա արտևանդները յամբօրէն խոնարհուեցին և փակուեցին շնորհակալութիւն յայտնելով:

Եւ այդ եղաւ բոլորը:

Տիկին Բաստիան չէր ուղղուել նոյնիսկ: Օդիլ մի բառ անգամ չէր արտասանել: Ժան բարեկեց, և դուրս ելաւ:

Ալշէյմի ծերունի գիւղապետը նրա ետեւից հասաւ:

— Քեզ պիտի ընկերանամ պարտէզի մինչև միւս ծայրը, ասաց, որովհետև մեզ, նոյնիսկ քեզ և քո հօր համար աւելի

լաւ է, որ քո՝ ծառուղուց դուրս գալը չնկատեն: Այդպէս կը կարծեն թէ դու վերադառնում ես դաշտից:

— Ի՞նչ տարօրինակ երկիր է դարձել ուրեմն այս երկիրը, ասաց երիտասարդը զայրացած շեշտով: Որովհետեւ դուք հօրս գաղափարները չունիք, հարցնում եմ ձեզ մի՞թէ չէք կարող ինձ ընդունել ձեր տանը, և եթէ ձեր մօտից եմ դուրս գալիս, պէտք է որ գաղտագողի հեռանամ... կրելուց յետոյ նախատինքը մի լուռութեան, որ ինձ համար շատ դաժան եղաւ:

Ժան բարձր էր խօսում, որպէսզի լսեն տնեցիները, որոնցից մի քանի քայլ միայն հեռու էր: Նրա դէմքի սովորական դժգոհութիւնը աւելացել էր և, յուզումը վզին ու ծնօտներին մկանները սեղմելով՝ ամբողջ դէմքին տուել էր մի ողբերգական արտայայտութիւն:

Պ. Բաստիան քաշ տուեց նրան,

— Ի՞նչ այստեղից ճանապարհ դցելս մի երկրորդ պատճառ էլ ունի, ասաց. այսպէս քեզ աւելի երկար ժամանակ պիտի ընկերանամ, քան այն ուղիով որով դու եկել ես, և պէտք է որ քեզ բացատրեմ...

Նրանք մտան մի ոչ-աւազածածկ ծառուղի, որ շոճինքից դէն՝ մի բանջարանոցի կողքով էր անցնում, յետոյ կիսում էր մի անտառ:

— Դու չես կարող հասկանալ, փոքրիկս, ասաց պ. Բաստիան հաստատ բայց մեղմ ձայնով, որովհետեւ, ուղիղն ասած՝ դու երբէք չես ապրել մեր մէջ: Սա նոր չէ, ինչոր տեսնում ես գոյութիւն ունի երեսուն տարուց իվեր...

Ծառերի բացուածքից, դաշտի մի կտորը երևաց, Բարդի գանգալատան հետ միասին, աւելի հեռւում, և նրա վերև Վոժի լեռները, որոնք կապտին էին տալիս:

— Ժամանակով, շարունակեց պ. Բաստիան— տարտամօրէնցոյց տալով դաշտանկարը, մեր Ալզասը մի ընտանիք էր կազմում: Փոքրերն ինչպէս և մեծերը միմեանց ճանաչում էին և ապրում էին սերտ բարեկամութեամբ: Եւ այդ ժամանակուայ մարդն եմ եղել և եմ: Աշխարհում չկար երբէք մի երկիր, ուր տիրէր արդարութիւնն ու պարզութիւնը և դու լաւ գիտես որ դեռ ես այսօր ես ոչ մի տարբերութիւն չեմ դնում հարուստի և աղքատի միջև, ստրագգուրգի մի բուրժուայի և լեռնաբնակ մի շլիտտօրի միջև... Բայց եղածը եղած է, հակառակ մեր կամքին մեզ բաժանեցին Յրանսիայից և մեզ հետ վարուեցին կոշտութեամբ, որովհետեւ այն չէինք ասում... Մենք չենք կարող ապստամբուել... Չենք կարող վճռուել տէրերը, որ մեր կեանքից, մեր սրտից ոչինչ չեն հասկանում... Այս դէպքում մենք

նրանց չենք ընդունի մեր տներում, ոչ նրանց, և ոչ էլ մեր միջից այն մարդկանց, որոնք զօրաւորագոյնի կողմն են բռնել...

Մի բոլէ լռեց, չուզելով այդ մասին իր ամբողջ մտածածը յայտնել և նորից շարունակեց խօսքը՝ ժանի ձեռքից բռնելով.

—Դու վայրացել ես իմ կնոջ դէմ, քեզ ցոյց տուած ընդունելութեան համար... Բայց հարցը ոչ քո և ոչ էլ նրա մասին է... Մինչև որ քո վրայ ծանրացող կասկածը չփարատի, դու մեզ համար այն անձն ես, որ իր ուսումն ստացել, դաստիարակուել է Գերմանիայում. այն կինը որ քիչ առաջ տեսար, դա մեր երկիրն է... Մտածիր... Պէտք չէ նրա դէմ ցաւել... Մենք բոլորս Ալգասի հաւատարիմ չենք մնացել, մենք տղամարդիկս, և մեզանից լաւագոյնները, վերջ ի վերջոյ դիմում են կոմպրոմիսներէի, և աւելի կամ պակաս չափով ընդունում են նոր տիրոջը: Բայց ոչ մեր կանայք... Ահ, ժան Օրերլէ, ես քաջութիւն չունեմ նրանց պախարակելու, նոյնիսկ երբ հարցը վերաբերում է քո մասին, որին այնքան սիրում եմ. նրանք՝ մեր ալգասուհիները՝ ոչ մի կերպ նախատած չեն լինում երբէք, երբ ձեզ չեն ընդունում իրանց տունը: Նրանք պաշտպանում են իրանց երկիրը, շարունակում են պատերազմը:

Ծերունու խորշոմած և կարմիր աչքերում արտասուքներ դողդոջեցին...

—Յետոյ պիտի ճանաչէք ինձ, ասաց ժան:

Հասել էին փողբերիկ պարկի վերջը, մի նոյնքան փտած փայտէ դռան առաջ, որքան միւսն էր: Պ. Բաստիան բաց արեց դուռը, սեղմեց երիտասարդի ձեռքը և երկար մնաց անտառի սահմանագծի վրայ, դիտելով ժանի հեռանալն ու փոքրանալը դաշտում, գլուխը քաշ արած քամու պատճառով, որ փչում էր միշտ և աւելի ուժգնութեամբ:

Ժան մինչև հոգու խորքը խռովուել էր: Իր՝ և այս հին երկրի իւրաքանչիւր ընտանիքի մէջտեղ նա զգում էր կանգնած իր հօրը: Նա տառապում էր ծնուած լինելուն՝ այն տան մէջ, դէպի ուր ուղղում էր իր քայլերը: Այս առաջին օրուայ իբրև միակ քաղցրութիւն՝ նա տեսնում էր Օդիլի պատկերը, որի աչքերը փակուած էին յուշիկ, յուշիկ: